



**YEREVAN STATE UNIVERSITY  
ENGLISH PHILOLOGY CHAIR**

**ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH**

**LANGUAGE AND LITERATURE IN  
THE CONTEMPORARY PARADIGM  
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

*SCIENTIFIC JOURNAL*

**9**

Yerevan  
“Lusakn”  
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

*ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ*

9

Երևան  
«Լուսակն»  
2018

**Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**The Journal is published by the decision of YSU Scientific Council**

**Գլխավոր խմբագիր՝** Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,  
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

**Խմբագրական խորհուրդ՝**

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Ջորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

**Editor-in –chief:** S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding  
Member of RA NAS, Honoured Scientist of RA

**Editorial Board:**

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:  
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրական գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու. և մշակույթ, թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.  
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	8
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ .....	15
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	25
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲԱՂԱԲՑՈՒՐ.....	32
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼՍՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ .....	40
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇՏԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	47
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
<b>ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ</b> ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	54
<i>Հասմիկ Ղաջոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈԼՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ .....	63
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԼԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵՔՍԵՐՈՒՄ.....	69
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍՏԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ .....	76
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	88
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	97
<i>Նարե Զորանյան</i>	

<b>ՖԵՆՈՐՁԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ</b> <b>ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ</b> .....	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

<b>THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE</b> .....	111
<i>Nare Hakobyan</i>	

<b>ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО</b> .....	123
<i>Марика Тонян</i>	

**ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**

<b>ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ</b> .....	132
<i>Մարիանա Սարգսյան</i>	

<b>ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ</b> .....	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

<b>COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN</b> .....	153
<i>Jemma Militonyan</i>	

**ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

<b>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ Ե ԲԱՆԱՎՈՐ</b> <b>ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ</b> .....	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

**ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

<b>ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ</b> <b>ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ</b> .....	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

<b>НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА</b> .....	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

<b>ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО</b> .....	188
<i>Наре Мкртчян</i>	

**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ**

<b>ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ</b> <b>ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ</b> .....	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

## ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

# ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ

Հասմիկ Մկրտչյան

*Երևանի պետական համալսարան*

**Ա**րդյո՞ք լեզուները պարզապես արտահայտում են մտքեր, կամ տարատեսակ լեզվական կառույցների օգնությամբ ձևավորում են այն մտքերը, որոնք մենք ցանկանում ենք արտահայտել, կամ արդյո՞ք լեզուն ձևավորում է մեր մտածելակերպը և խորապես ազդում մեր աշխարհընկալման վրա: Մրանք այն հարցերն են, որոնք մշտապես հետաքրքրել և հետաքրքրում են լեզվաբաններին, հոգեբաններին, մշակութաբաններին: Շառլմեյնը (<<https://aptlii.wiscweb.wisc.edu/wp>>) նշում է, որ երկրորդ լեզվին տիրապետելը երկրորդ հոգի ունենալն է, և այս տեսակետը այնքան էլ ընդունելի չէ հետազոտողների կողմից: Երբ Նոամ Չոմսկին (1968) առաջ քաշեց լեզվաբանական այն տեսությունը, որ բոլոր լեզուները հիմնված են համընդհանուր քերականություն վրա և, ըստ էության, միայնացից առանձնապես չեն տարբերվում՝ թվաց, թե լեզվական տարբերությունների վրա հիմնված մտածողության տարբերությունների մասին խոսելն անիմաստ է: Իրականում, քերականական և լեզվական այլ ընդհանրությունները չեն կարող բացառել այն փաստը, որ տարբեր լեզվակիրներ տարբեր լեզվամտածողության, տարբեր ինքնության, տարբեր մշակույթի կրողներ են, և դա չի կարող պայմանավորված լինել լեզվական համընդհանրությամբ, այլ, ավելի շուտ պայմանավորված է լեզվական տարբերակայնությամբ:

**Բանալի բառեր.** լեզու և մշակույթ, փոխկապակցություն, միջմշակութային հաղորդակցություն, փոխառություն, ճանաչողական ունակություն, ինքնություն:

## Ներածություն

Լեզվական միավորները կրում են լրացուցիչ իմաստային երանգներ, որոնք բառային նշանակություններից զատ արտահայտում են այլ իրողություններ, այսինքն բառիմաստն ավելի խորը, ընդարձակ ու համապարփակ է հասկացություն է: Նախ և առաջ նկատի ունենք լեզվական միավորների՝ որոշակի սոցիալական խմբի մշակութային որակներին բնորոշ իմաստային երանգները: Որն է լեզվով հաղորդակցվելը նշանակում է հավասարաբար առնչվել այդ լեզվի մշակույթին: Մենք չենք կարողանա սովորել լեզու՝ չհասկանալով տվյալ լեզվի մշակույթը, քանի որ լեզուն և մշակույթը սերտորեն կապված են միմյանց, ավելին՝ կարելի է ասել, որ դրանք սերտաճած են: Այսպիսով, լեզուն այբուբենից, բառապաշարից, քերականական կանոններից զատ, նաև մշակույթ է:

Ոչ ոք չի հերքում, որ լեզուն և մշակույթը փոխկապակցված են: Այնուամենայնիվ, ավելի ճշգրիտ կլիներ ասել, որ մշակույթային փոփոխություններն են բերում լեզվի և մտածողության փոփոխությունների: Տվյալ լեզվով հաղորդակցվողներն օգտագործում են լեզվական որոշակի միավորներ, որոնք արտահայտում են տվյալ մշակույթին բնորոշ փորձն ու ընկալումները: Այդպիսի միավորները կա-



րող են համարվել տվյալ մշակույթի կրողների լեզվական գիտակցության և ընկալման մեջ արմատավորված ծածկագրեր:

Հենվելով որոշակի ուսումնասիրությունների վրա՝ Ուորֆը (1956) պնդում է, որ, օրինակ, հոպի լեզվով խոսողներն ու անգլերեն լեզվով խոսողները աշխարհն ընկալում են տարբեր տեսանկյուններից, քանի որ նրանց լեզուները տարբեր են:

Ակնհայտորեն հնարավոր չէ միանշանակ պատասխան տալ այն հարցին, թե արդյոք լեզուն է ազդում մշակույթի վրա, թե՛ մշակույթը՝ լեզվի, արդյոք մենք չենք կարող մտածել այնպիսի վերացական հասկացությունների մասին, որոնց համապատասխան և համարժեք բառեր չունենք մեր լեզվում, կամ գուցե մենք համապատասխան բառեր չունենք որոշակի երևույթների համար, քանի որ չենք մտածում այդպիսի երևույթների մասին: Փաստն այն է, որ նմանատիպ հասկացությունների ու երևույթների, դրանց լինելու և չլինելու խնդիրը կապված է տվյալ լեզվի մշակույթի հետ և պայմանավորված է այդ մշակույթով: Այլ կերպ, հենց մշակույթն է՝ ավանդույթները, ապրելակերպը, սովորությունները, որ ձևավորում և պայմանավորում է ոչ միայն մեր մտածական, այլև՝ խոսքային առանձնահատկությունները:

### **Մշակույթի և լեզվի փոխազդեցությունը**

Մարդկային հաղորդակցության գործընթացը բարդ է, քանի որ մեր ուղեքննչից շատերը մենք փոխանցում ենք ոչ բառային միջոցներով՝ ասել է թե մարմնի լեզվով: Հաղորդակցության այդպիսի ձևերը հատուկ են միայն տվյալ մշակույթին (բացառությամբ համընդհանուր մարդկային առանձնահատկությունների): Ասվածից հետևում է, եթե լեզվում անտեսվի մշակույթի դերը, ապա երկու տարբեր հասարակությունների, ազգերի կամ էթնիկ խմբերի հետ հաղորդակցական գործընթացը կարող է թյուրըմբռնումների տեղիք տալ:

Պատկանելով որոշակի մշակույթի և կրելով միայն այդ մշակույթին բնորոշ ինչպես լեզվական, այնպես էլ ոչ լեզվական որակները՝ բառերին զուգահեռ մենք սովորում ենք ինչպես օգտագործել ժեստերը, միմիկաները, ձայնի տոնը, տեմպը և այլն: Մեկ այլ մշակույթի կրողի մոտ դրանք կարող են միանգամայն տարբեր լինել:

Լեզուն և մշակույթը բարդ համակցություն է, որի նշված երկու տարրերն էլ երկուսն էլ անընդհատ ընթացող փոխազդեցության մեջ: Երկուսն էլ միաժամանակ զարգանալով՝ ի վերջո ձևավորում, հղկում և կերտում են այն, ինչը մենք կոչում ենք անձ, անհատ ազգ կամ էթնիկ խումբ: Այս համատեքստում Քրոբերը (1923) ասել է. «Մշակույթի ակունքներում կանգնած է խոսքը, և այդ ակունքներից սկսած՝ յուրաքանչյուրի հարստացումը նշանակում է մյուսի հետագա զարգացում»:

Եթե մշակույթը մարդկային փոխհարաբերության արդյունք է, ապա մշակութային դրսևորումները հաղորդակցության այնպիսի ակտեր են, որոնք ընդունվում են որոշակի լեզվախոսքային հանրության կողմից: Ըստ Ռոսսի և Լենդիի (1973), «Տեղեկատվությունը, որը մենք որևէ լեզվով խոսելիս փոխանակում ենք միմյանց հետ, հիմնում է մեկ ամբողջական խոսքային հասարակության վրա, այն է՝ ամբողջ հասարակությունը ընկալվում և հասկացվում է խոսքային փոխանակումների միջոցով»: Այնուհետև հետազոտողը բացատրում է, որ տվյալ լեզուն հնարավոր չէ սովորել, եթե երեխան տվյալ հասարակությունից դուրս է գտնվում, և լեզուն սովորե-

լու գործընթացն անպայմանորեն կապված է տվյալ լեզվի հետ սրտորեն առնչվող մշակութային ընկալումներով: Երկուսի միասնությունն է, որ ապահովում է լեզվակիր անհատի ճանաչողական ունակությունների զարգացումը:

Այսպիսով, կարելի է ասել, որ լեզվական հաղորդակցությունը ընթանում է մշակույթի միջոցով, իսկ մշակութային հաղորդակցությունը՝ լեզվի: Մ. Միլվերշտեյնը (1985) ենթադրում է, որ մշակույթի հաղորդակցական ուժը գործում է ոչ միայն իրականության տարբեր կողմերի ներկայացման, այլև մեկ համատեքստը մյուսի համատեքստի հետ կապելու գործընթացում: Ուրիշ խոսքով, հաղորդակցությունը ոչ միայն այն խորհրդանիշերի գործածությունն է, որոնք արտահայտում են համոզմունք, զգացմունք, ինքնություն կամ որոշակի իրավիճակներ, այլև տվյալ հասկացությունները համատեքստ բերելու մի ձև է:

Իրականությունը սովորաբար հիմնված է որոշակի ազգային և սոցիալական խմբի լեզվական մտածողության և սովորությունների վրա: Երկու տարբեր լեզուներ երբևէ իրար նման լինել չեն կարող, եթե նրանք չեն ներկայացնում նույն սոցիալական իրականությունը: Իրական աշխարհը, որտեղ տարբեր հասարակություններ են համագոյակցում, նույնն է և հստակորեն սահմանված (Sapir: 1929), բայց լեզուն և մշակույթը, թեև մշտապես համագործակցող, տարբեր գաղափարական իրողություններ են, որոնց համատեղումը թույլ է տալիս միննույն մշակույթի և լեզվի կրողներին ազատորեն հաղորդակցվել միմյանց հետ:

Խնդիր է առաջանում միայն այն դեպքում, երբ միջմշակութային փոխազդեցության ընթացքում հաղորդողը/հասցեագիրը և հաղորդագրություն ստացողը/հասցեատերը տարբեր մշակույթների ներկայացուցիչներ են: Հետևաբար, մշակույթների միջև կապ հաստատելու և այդ կապը ամրապնդելու համար անհրաժեշտ է ոչ միայն սովորել մեկ այլ մշակույթի լեզուն, այլև կապ հաստատել մշակութակիրների հետ և սովորել նաև նրանց մտածելակերպը, սովորությունները, հավատն ու հույզերը, որոնք կարող են տարբեր լինել սեփական մշակութային բնորոշումներից:

Մշակույթը մոտեցումների, համոզմունքների, վարքագծային պայմանականությունների, հիմնական մտածելակերպի և արժեքների խճճված հավաքածու է, որն ազդում է ոչ միայն տվյալ խմբի յուրաքանչյուր անդամի վարքագծի վրա, այլև այն բանի վրա, թե ինչպես է այդ անդամը մեկնաբանում այլ մարդկանց կամ այլ մշակույթներին պատկանող ներկայացուցիչների վարքագիծը: Մշակույթը նաև գոյություն ունեցող երևույթների/օբյեկտների նկատմամբ վերաբերմունքի արտահայտման միջոց է: Օբյեկտներին տրվում են համապատասխան անուններ, որոնք բնորոշ են տվյալ մշակույթին:

Օրինակ, ինչպես նշում է Բիրանը (1989) *a loaf of bread* արտահայտությունը բրիտանացիների մոտ արթնացնում այնպիսի զգացողություններ, որոնք, առանց մշակութային հենքը ըմբռնելու, չեն կարող ընկալվել հայ լեզվամշակութակիրի կողմից: Բանն այն է, որ նշված արտահայտությունը երբ բառացի թարգմանվի հայերեն կատարվի *մեկ բոբոն հաց*, որը ընդհանրապես համարժեք չի լինի տվյալ արտահայտությանը:

Այսպիսով, մենք կարող ենք եզրակացնել, որ լեզուն մշակույթի մի մասն է, և դրա միջոցով մենք արտահայտում ենք մեր սեփական մշակութային համոզ-

մունքներն ու արժեքները, և որ օտար բառի կամ բառիմաստի ճիշտ ընկալումն ու կիրառումը կապված է ոչ միայն օտար լեզվի բառապաշարի, այլև մշակույթի իմացության հետ:

Ռուս մշակույթի կրողները, օրինակ, կապույտի երանգները պատկերելու համար ավելի շատ բառեր են կիրառում (*голубой, синий, лазурный, васильковый*) հետևաբար տեսողականորեն ավելի լավ են տարբերում կապույտի երանգները, քան հայ մշակույթի կրողները: Որոշ ազգային խմբեր կիրառում են ոչ թե *աջ* և *ձախ*, այլ *հյուսիս*, *հարավ*, *արևելք* և *արևմուտք* բառային միավորները, և արդյունքում նրանք աչքի են ընկնում տարածական կողմնորոշման ավելի մեծ ունակություններով, քան միայն *աջի* և *ձախի* բառակիրները:

Իսպանախոսներն ու ճապոնախոսները չեն կարողացել հիշել գործողություն կատարող սուբյեկտին այնքան լավ, որքան անգլիացիները, քանի որ իսպաներենում և ճապոներենում, պատճառահետևանքային կապերը շատ ավելի թույլ են արտահայտվում և կրավորականն ավելի լայն կիրառություն ունի, քան անգլերենում: Օրինակ, իսպաներեն և ճապոներեն լեզվակիրները նախընտրում են գործածել *Օտղկամանը կոտրվեց* ասույթը, այլ ոչ թե դրա *Ջոնը կոտրեց Օտղկամանը* տարբերակը (<<https://www.languagemagazine.com>>):

Ասվածից հետևում է, որ լեզվի ուսուցումը սերտորեն կապված է ոչ թե լեզվի, այլ լեզու-մշակույթի ուսուցման հետ: Մշակույթի ուսուցումը, ըստ էության, կարևոր դեր է կատարում օտար լեզվի ուսուցման գործընթացում, ավելին, այն դրա անբաժանելի տարրն է: Եվրոպական մշակութային հիմնադրամի Բելաջիո հոչակագիրը և Կրթական զարգացման միջազգային խորհուրդը պնդում են, որ միջազգային արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է ոչ միայն լեզվական իմացություն, այլև հենքային գիտելիքներ լեզվակիր երկրների և նրանց մշակույթների մասին (<<https://talloiresnetwork.tufts.edu>>):

Լեզուն հասարակության մտքի և վարքագծի արդյունք է: Օտար լեզվով հարողակցվող անհատի խոսքի արդյունավետությունը անմիջականորեն կապված է այդ լեզվի մշակույթի հետ (Taylor 1979): Մշակույթն ու սոցիալական փոփոխությունները առաջացնում են լեզվական նոր ձևեր: Բառապաշարը լեզվի այն մասն է, որը ամենահաճախն ու արագն է փոփոխվում: Նոր բառեր և բառակապակցություններ են հայտնվում և տարածում գտնում, եթե դրանց կարիքն առաջանում է:

Այնուամենայնիվ, թե՛ լեզվում, թե՛ մշակույթում լիարժեք մեկուսացումներ չկան: Դիֆուզիան, փոխառությունը, նվաճումը և համախառնումը շարունակական գործընթացներ են: Համաշխարհային համակարգում լեզվական և մշակութային տարրերն անցնում են խմբից խումբ: Լեզուների և մշակույթների շփումը առաջացնում է բառապաշարային շարահյուսական լեզվական փոփոխություններ:

Մշակութային առանձնահատկությունները կարող են փոխկապակցվել լեզվընտանիքների տեղակայման հետ: Եթե՞նիկ խմբերը, որոնք խոսում են միևնույն լեզվընտանիքին պատկանող լեզուներով, կարող են ավելի շատ մշակութայնորեն նմանվել միմյանց, քան այն խմբերը, որոնք խոսում են տարբեր լեզվական համակարգ ունեցող լեզուներով: Նույնիսկ եթե կան խմբեր, որոնց անդամները խոսում են ոչ միևնույն լեզվընտանիքին պատկանող լեզուներով, կարող են կա-

պէր հաստատել կոնկրետ ոլորտներում (ռազմավարություն, առևտուր, խառնամուսնություններ): Նոր գաղափարներն ու լեզվական միավորները լայնորեն տարածվում են տվյալ խմբին պատկանող լեզուներում: Օրինակ, անգլերենի բառապաշարի շատ միավորներ գալիս են ֆրանսերենից: Լեզվական այդպիսի փոխառությունները նախ և առաջ արտացոլում են ֆրանսիական մշակույթը Հաշվի առնելով, թե ինչ բառեր են փոխառվել, մենք կարող ենք հետևություններ անել այն մասին, թե ինչպիսին է եղել հաղորդակցության բնույթը: Այսպիսով, լեզուներում գրեթե միշտ առկա են մշակույթների բախումներից առաջացած հետքեր:

Փորձելով հասկանալ, թե ինչպես է մշակույթն առաջացնում լեզվական բազմազանություն լեզուներում, նախ նշենք, որ *ստանդարտ լեզու* հասկացությունը վերաբերում է այն լեզվին, որը դոմինանտ է և ընդհանուր առմամբ ընդունվում է որպես պատշաճ խոսքածև: Ստանդարտ լեզուն բացառում է *urban slang*-ը և սխալ քերականական կանոնների օգտագործումը, թեև վերջիններս գոյություն ունեն լեզվում: Նաև *բարբառները*, որոնք նույն լեզվում ունեն ընդունված ստանդարտից տարբեր արտասանություն, քերականություն և բառապաշար: Նույն լեզուն, օրինակ անգլերենը, կարող է ունենալ իր այլ ստանդարտ տարբերակը, օրինակ ամերիկյան անգլերենը, որը տարբերվում է բրիտանական անգլերենից (բառապաշարային, արտասանական, քերականական տարբերություններ): Ակցենտը վերաբերում է միայն հնչյունաբանական տարբերություններին: Հիմնականում ակցենտը առաջ է գալիս այն ժամանակ, երբ խոսողները տարբեր կերպ են հնչում միևնույն լեզվով խոսելիս: Հետևաբար, միևնույն լեզվով խոսողների մշակույթները կարող են տարբեր լինել նաև տարբեր ակցենտների պատճառով: Ամերիկայի Միացյալ Նահանգներում մենք ունենք ինը տարբեր մշակույթային շրջաններ, որոնք ունեն անգլերենի ստանդարտ լեզվի տարբեր ակցենտներ: Այս տարածաշրջաններից յուրաքանչյուրը ժամանակի ընթացքում զարգացել է՝ հիմնվելով մշակույթի վրա:

Միացյալ Նահանգների կամ Արևմտյան Եվրոպայի մշակույթները արժևորում են խոսքային հաղորդակցության ինքնադրսևորումը: Ամերիկացիները խրախուսում են ուղղախոսությունը, այսինքն գերադասում են ասել այն, ինչ մտածում են տվյալ հարցի վերաբերյալ: Մյուս կողմից, ասիական մշակույթները օգտագործում են անուղղակի հաղորդակցական ոճ: Թեև անգլերենում նույնպես բառերը, ինչպիսիք են օրինակ *maybe, perhaps* եղանակավորող միավորները, ավելի հաճախ են օգտագործվում, քան *yes, no* կամ *sure* հաստատող միավորները: Հայկական մշակույթում մարդիկ նախընտրում են տողատակերով խոսել, և չնայած մեր խոսքը բավականին համեմված է դարձվածքներով, քարացած արտահայտություններով, ինչպես նաև բարբառներից վերցրած բառակապակցություններով, մենք, միևնույնն է, ավելի հեշտ ենք միմյանց հասկանում նույնիսկ առանց բառերի:

Թեև անգլերենում օգտագործվել են ֆորմալ *thou, thee* և ոչ ֆորմալ *you* դերանունները, այսօր օգտագործվում է միայն *you* դերանունը և՛ եզակի ոչ ֆորմալ իմաստով, և՛ հոգնակի ֆորմալ իմաստով: Այլ լեզուներում, օրինակ գերմաներենում, հայերենում, ֆրանսերենում պահպանվում են սոցիալական նորմերին ու կանոններին համապատասխանող եզակի ոչ ֆորմալ և հոգնակի ֆորմալ տարբեր ձևեր: Լեզվական այսպիսի տարբերությունները բխում են մշակույթից. Ամերիկացիներն ու անգլիացիները ավելի անմիջական և անկաշկանդ միջավայրում

են ապրում քան գերմանացիները, հայերն ու ֆրանսիացիները, ուստի ավելի ազատ են դիմելիս:

Լեզվի և մշակույթի միջև փոխհարաբերությունը միանշանակա՞ն սիմբիոտիկ է, քանի որ մեկն առանց մյուսի չի կարող իրացնել բնորոշ գործառույթները:

Մարդիկ ծնվում են առանց լեզվի իմացության, սակայն լեզվի ձեռքբերման ունակությամբ, որը հնարավորություն է տալիս սովորել մեկից ավելի տարբեր լեզուներ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդիկ իրենց մայրենի լեզուն ավելի շուտ սովորում են մշակութային հաղորդակցման, քան ֆորմալ ուսուցման միջոցով:

Աշխարհում կա մոտավորապես 6000 լեզու, և դրանցով հաղորդակցվում են 9000 տարբեր մշակույթներ: Որոշ լեզվաբաններ մտահոգություն են հայտնում, որ աշխարհում ամենից քիչ օգտագործվող լեզուների 5 տոկոսին սպառնում է ոչնչացում, և առաջիկա 100 տարիների ընթացքում աշխարհի բոլոր լեզուների 90 տոկոսը կամ արդեն մեռնելու պրոցեսում կգտնվեն կամ արդեն մեռած կլինեն: Ի վերջո, մի ամբողջ մտածողության ձև, մշակույթ կվերանա, եթե գոյություն չունենա տվյալ լեզուն:

Լեզուն, որպես մշակույթի տարր, շատ կարևոր դեր ունի մարդու կյանքում: Այն հնարավորություն է ընձեռում մարդկանց շփվել մյուսների հետ՝ իրենց այս կամ այն կարիքների բավարարման նպատակով: Ի վերջո, պետք է նշել, որ լեզվի հիմնական գործառույթը այնուամենայնիվ հաղորդակցումն է: Մակայն սա ամեննին չի նշանակում, որ լեզուն միայն մեկ գործառույթ ունի: Լեզուն գործիք է ինքնադրսևորման, ինտեգրման, սոցիալական ադապտացիայի և կառավարման: (Keraf 1980):

Շատ լեզվաբաններ և փիլիսոփաներ դեմ են լեզվական դետերմինիզմին: Նորանք պնդում են, որ լեզուն է թելադրում միտք, և չկա միտք առանց լեզվի: Ընդունված է նաև այն տեսակետը, որ լեզուն ազդում է ոչ միայն մտքի, այլև մշակույթի վրա: Հայտնի օրինակն այն է, որ Էսկիմոսը ձյան համար բազմաթիվ հաշվելի գոյականներ ունի, իսկ անգլերենում, հայերենում և այլ լեզուներում միայն մեկ բառ է կիրառվում ձյան հասկացությունն արտահայտելու համար: Հետևաբար, Էսկիմոյի և անգլախոսի կամ հայի աչքերով «ձյան աշխարհը», բնականաբար, տարբեր կլինի: Այս օրինակը ցույց է տալիս, որ մարդկանց ընկալումները իրենց շրջապատի մասին փոփոխվում են ըստ իրենց լեզուների հայեցակարգային կատեգորիաների (Runqing, 2003): Այդուհանդերձ, դեռևս վերջնական պատասխան չի գտել այն հարցը, թե ո՞ր ազդեցությունն է առաջնայինը՝ լեզվականը, թե՞ մշակույթինը, և թե արդյոք մայրենի լեզուն է պայմանավորում մարդկային տարբեր ընկալումները, թե՞ հակառակը՝ տարբեր աշխարհայացքներն ու մշակույթներն են որոշում լեզուն: Այստեղ տեղին է նշել Ուինսթոն Չերչիլի մեջբերումը. «Մենք ձևավորում ենք մեր տները, իսկ հետո մեր տները ձևավորում են մեզ»:

### **Եզրակացություն**

Այսպիսով, լեզվի միջոցով մենք ներկայացնում ենք մեր փորձն ու մշակույթը, մեր ընկալումները, իսկ լեզուն էլ, իր հերթին, ձևավորում է մեր մտածելակերպն

ու մշակույթը: Հետևաբար, լեզվի և մշակույթի փոխազդեցությունը, փոխկապվածությունը, միասնությունը փաստ է: Մի կողմից լեզուն արտացոլում է լեզվակրի մոտեցումները, համոզմունքները, աշխարհայացքը, մյուս կողմից՝ մշակույթը լեզվական արտահայտման անբաժանելի մասն է: Լեզուն նպաստում է մշակույթի պահպանմանը, իսկ մշակույթը՝ լեզվի:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Ager, D. (1993) *Language Education for Intercultural Communication*. U.S: Multilingual Matters LTD.
2. Asante, M.K. (1990) *Handbook of International and Intercultural Communication*. London: SAGE.
3. Byran, M and Sarries, V.E. (1989) *Investigating Cultural Studies in Foreign Language Teaching*. Multilingual Matters LTD.
4. Clyne, M. (1994) *Intercultural Communication*. Cambridge: CUP.
5. Dodd, H.D. (1997) *Intercultural Communication*. Brown Publishers.
6. Jandt, F.E. (2003) *Intercultural Communication: An Introduction*. London: SAGE.
7. Oatey, H. S. (2000) *Culturally Speaking: Managing Rapport through Talk Across Culture*. London: Continuum.

### **Culture as Language**

Language and culture are closely interrelated and interconnected. Language, being an indispensable part of culture, serves as a tool to transfer cultural messages. Language and culture is a complex combination. Both of them develop simultaneously – forming, polishing and shaping what we call a person, an individual, a nation. The real world is unconsciously built on the linguistic thinking and habits of particular social groups. No two languages can ever be the same if they do not represent the same culture and social reality. Thus, culture is best reflected in language, and language – in culture.

### **Язык - это культура**

Язык и культура - это сложная, взаимодействующая комбинация. Реальный мир бессознательно строится на лингвистическом мышлении и привычках отдельных культур и социальных групп. Никакие два языка не могут быть одинаковыми, если они не представляют собой одну и ту же социальную реальность. Язык является частью культуры, и через него мы можем выражать культурные убеждения и ценности, и особое использование данного слова характерно только для этого языка и его культуры.

## Մեր հեղինակները

**Ալինա Պետրոսյան** – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ [alina.petrosyan@yahoo.com](mailto:alina.petrosyan@yahoo.com)

**Անահիտ Հակոբյան** – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝  
[anahit.hakobyan1988@yandex.ru](mailto:anahit.hakobyan1988@yandex.ru)

**Անի Տեր-Պետրոսյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ [aniterpetrosyan@ysu.am](mailto:aniterpetrosyan@ysu.am)

**Աննա Կնյազյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.  
Էլ. հասցե՝ [annaknyazyan@ysu.am](mailto:annaknyazyan@ysu.am)

**Աստղիկ Մխիթարյան** – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի  
Էլ. հասցե՝ [asto7@rambler.ru](mailto:asto7@rambler.ru)

**Արեգա Համբարձումյան** – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ [orbisenglish@gmail.com](mailto:orbisenglish@gmail.com)

**Արմենուհի Մարտիրոսյան** – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ  
Էլ. հասցե՝ [arm.martirosyan@ysu.am](mailto:arm.martirosyan@ysu.am)

**Գայանե Մուրադյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.  
Էլ. հասցե՝ [g.murad@ysu.am](mailto:g.murad@ysu.am)

**Գոհար Հարությունյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ [goharharutyunyan@ysu.am](mailto:goharharutyunyan@ysu.am)

**Համլետ Առաքելյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ [hamlet.araqelyan@gmail.com](mailto:hamlet.araqelyan@gmail.com)

**Հասմիկ Ղաջոյան** – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ [hasmikghajoyan@mail.ru](mailto:hasmikghajoyan@mail.ru)

**Հասմիկ Մկրտչյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ [hasmikmkrtyan@ysu.am](mailto:hasmikmkrtyan@ysu.am)

**Մարիամ Առաքելյան** – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ  
Էլ. հասցե՝ [mariamarakelyan89@mail.ru](mailto:mariamarakelyan89@mail.ru)

**Մարիամ Գևորգյան** – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ [miriamgevorgian@gmail.com](mailto:miriamgevorgian@gmail.com)

**Մարիանա Սարգսյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ [marianasargsyan@ysu.am](mailto:marianasargsyan@ysu.am)

**Մարիկա Տոնյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ [marikatonyan@ysu.am](mailto:marikatonyan@ysu.am)

**Մարինե Մկրտչյան** – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ [m.mkrtyan@ysu.am](mailto:m.mkrtyan@ysu.am)

**Նաիրա Մկրտչյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ [nairamkryan@ysu.am](mailto:nairamkryan@ysu.am)

**Նատալյա Գոնչար-Խանջյան** – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ [natalie.goncharkhanjyan@ysu.am](mailto:natalie.goncharkhanjyan@ysu.am)

**Նարե Հակոբյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

**Նարե Մկրտչյան** – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

**Նարե Չոբանյան** – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

**Նարե Ջաբաղյան** – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

**Ջեմմա Միլիտոնյան** – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

**Ռուզաննա Առաքելյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

**Միրարփի Կարապետյան** – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am



## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝  
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // Investigations in Linguistics. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // The European English Messenger. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել [afajournal@ysu.am](mailto:afajournal@ysu.am) էլ. հասցեին:



Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,  
Երևանի պետական համալսարան  
Հեռախոս՝ (+374 60) 710 546  
Էլ. հասցե՝ sedagaspanyan@ysu.am, afajournal@ysu.am

**«ԳԵՎՈՐԳ - ԳՐԱՅՐ» ՍՊԸ**



**Հրատարակչություն**  
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:  
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74  
Էլ. փոստ [lusakn@rambler.ru](mailto:lusakn@rambler.ru)